



Ակաժ 2016 թվականի օգոստոսի 15 –ից,
«Երիտասարդության ձայնը հանուն զարգացման և փոփոխությունների»
ծրագրի շրջանակներում ծրագրին մասնակից հայկական դպրոցներում, ծրագրի մասնակից հայ ուսանողները իրականացնում են հանդիպումներ և քննարկումներ ծրագրի շահառու դպրոցների աշակերտների հետ: Երեխաները մեծօգուտությամբ և սպասումներով պատրաստվում են ծրագրի մեկնարկին: Ծրագրի յուրաքանչյուր մասնակից իր դպրոցում անց է կացնում հանդիպում, որի ընթացքում ընդհանուր կերպով աշակերտներին ներկայացվում են վրացական գործընկեր դպրոցի հետ նախագծված ծրագրի գաղափարը և քննարկումների արդյունքում հավաքագրվում են առաջարկություններ ուղղված հայ-վրացական համատեղ ծրագրերի արդյունավետ պլանավորման և իրականացմանը :

Աշակերտները մեծակնկալիքներ ունեն իրականացվելիք փոքր ծրագրերից և հուսով են, որ նրանք կբերեն սպասված արդյունքը՝ հարևան սահմանամերձ երկրների դպրոցների միջև կիսատատվեն ջերմ և շարունակական հարաբերություններ, ինչը լավ նախադեպ կհանդիսանա միջսահմանային ավելի լայն նախաձեռնությունների նախագծման և իրականացման համար:

«Երիտասարդության ձայնը հանուն զարգացման և փոփոխությունների» ծրագիրն իրականացվում է ՀԿ-ի, CIVITAS GEORGICA ՀԿ-ի և ՀԿ –ի կողմից, Եվրոպական Միության աջակցությամբ :

